

Ամսաթվեր

Ժամանակի սահմանափակում՝ 2 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Ալեքսը այսօրվա ամսաթվի (2 . 2 . 2022) մեջ հետաքրքիր փաստ նկատեց: Այն բաղկացած է ընդամենը երկու թվանշաններից՝ 2 և 0 : Ալեքսին հետաքրքրեց, թե հաջորդ անգամ երբ այդպիսի ամսաթիվ կլինի: Նա իսկույն գլխի ընկավ, որ դա կլինի 18 օր հետո՝ 20.2.2022 -ին: Հիմա նա Ձեզ առաջարկում է գրել ծրագիր, որ կամայական ամսաթվի համար գտնի, թե այդ օրվանից քանի օր հետո կլինի ամսաթիվ, որը բաղկացած է առավելագույնը 2 իրարից տարբեր թվանշաններից: Այս խնդրում օրվա և ամսի համապատասխանող թվերի առջևից գրվող 0-ները հաշվի չեն առնվում: Այսինքն այսօրվա ամսաթիվն է համարվում 2.2.2022-ը, ոչ թե 02.02.2022-ը: Համարել, որ փետրվարն ունի 28 օր: Հիշեցում տարվա ամիսներն ունեն համապատասխանաբար հետևյալ քանակությամբ օրեր՝ [31, 28, 31, 30, 31, 30, 31, 31, 30, 31, 30, 31, 30, 31]:

Մուտքային տվյալներ

Մուտքի միակ տողում տրված է ամսաթիվ՝ <օր> . <ամիս> . <տարի> ֆորմատով: Ամսաթիվն ընկած է 1.1.1-ից 31.12.2110 փակ միջակայքում:

Ելքային տվյալներ

Ելքի միակ տողում պետք է արտածել մեկ բնական թիվ՝ մուտքում տրված ամսաթվից քանի օր հետո կլինի ամսաթիվ, որը բաղկացած է առավելագույնը 2 իրարից տարբեր թվանշաններից:

Օրինակ

Մուտք	Ելք
2 . 2 . 2022	18
10 . 11 . 111	1

Բացատրություն

Երկրորդ օրինակի մուտքում նշված օրվա հաջորդ օրը 11.11.111-ն է, իսկ այդ ամսաթիվը բաղկացած է ընդամենը 1 թվանշանից, ինչը ևս բավարարում է պահանջում նշված պայմաններին, հետևաբար պատասխանը 1 է: